ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՀԹԹ ԳՀԾՁԲ 21/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի

հայտերի բացման և գնահատման նիստի

ք. Երևան

16 ապրիլի, 2021 թվական

ժամը 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Մարինե Բաղդասարյան

Հանձնաժողովի անդամներ՝ Մանե Խաչատրյան

Անահիտ Նալբանդյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Արևհատ Ավետիսյան

«ՄԱՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ-ի տնօրեն Մարիամ Մելքոնյան

«Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ի տնօրեն Կառլոս Բաղրամյան

**1. Տեղեկություններ հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին**

*/հանձնաժողովի նախագահ Մ. Բաղդասարյան/*

1.1 «ՀԹԹ ԳՀԾՁԲ 21/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերը բացվել են հրավերով սահմանված վայրում և ժամկետում՝ քաղաք Երևան, Մոսկովյան 40 հասցեում, 2021 թվականի ապրիլի 16-ին, ժամը 11:00-ին:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0**

**2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները /անունները/ և հասցեները**

*/հանձնաժողովի նախագահ Մ. Բաղդասարյան/*

2.1 «ՀԹԹ ԳՀԾՁԲ 21/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտեր ներկայացրել են հետևյալ մասնակիցները.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը /անունը/ | Մասնակցի հասցեն | Մասնակցի էլ. փոստի հասցեն |
|---|---|---|---|
| 1. | «Փրայմ» ՍՊԸ | ք. Երևան, Ազատության 24/15 | prime.advertising@mail.ru |
| 2. | «ՄԱՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ | ք. Երևան, Կոմիտասի պող. 59/7 շ., 27 բն. | mariammelkonyan@mail.ru |
| 3. | «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ | ք. Երևան, Ջավարյան 57/19 | karlos.baghramyan@gmail.com |

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0**

3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության վերաբերյալ

/հանձնաժողովի նախագահ Մ. Բաղդասարյան/

3.1 Մասնակիցների կողմից «ՀԹԹ ԳՀԾՁԲ 21/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտեր պարունակող ծրարները կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0**

4. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

/հանձնաժողովի նախագահ Մ. Բաղդասարյան/

4.1 «ՀԹԹ ԳՀԾՁԲ 21/01» գնանշման հարցման ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացված հայտեր պարունակող և գնահատող հանձնաժողովի կողմից բացված յուրաքանչյուր ծրարում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը և յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0**

5. Գնման ընթացակարգի նախահաշվային գինը և մասնակիցների առաջարկած գները

/հանձնաժողովի նախագահ Մ. Բաղդասարյան/

5. 1 «ՀԹԹ ԳՀԾՁԲ 21/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի նախահաշվային գինը և մասնակիցների կողմից առաջարկվող գներն են.

**Չափաբաժին 5: Տպագրական ծառայություններ /Հայկական հանելուկների խաղ/**

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Մասնակցի գնային առաջարկը /ՀՀ դրամ/ | | Նախահաշվային գինը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|
| | | առանց ԱԱՀ-ի | ԱԱՀ-ով | |
| 1 | «Փրայմ» ՍՊԸ | 450000 | - | 500000 |
| 2 | «ՄԱՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ | 275000 | 330000 | |
| 3 | «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ | 477500 | - | |

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0**

6. Տվյալներ՝ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ

/հանձնաժողովի նախագահ Մ. Բաղդասարյան/

**Հանձնաժողովը որոշեց՝**

«ՀԹԹ ԳՀԾՁԲ 21/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքում մասնակիցների զբաղեցրած տեղերը

6.1 Ընթացակարգի 5-րդ չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցնող և ընտրված մասնակից ճանաչել «ՄԱՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ-ին, 2-րդ տեղ զբաղեցնող՝ «Փրայմ» ՍՊԸ-ին, 3-րդ տեղ զբաղեցնող՝ «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ին:

6.2 Ընթացակարգը 1, 2, 3, 4 չափաբաժինների համար հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը՝ ոչ մի հայտ չի ներկայացվել:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0**

**7. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների, հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումների մասին**

/հանձնաժողովի նախագահ Մ. Բաղդասարյան/

7.1 «ՀԹԹ ԳՀԾՁԲ 21/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

7.2 «ՀԹԹ ԳՀԾՁԲ 21/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

8. Հանձնաժողովը որոշեց

8.1 հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և սահմանել անգործության ժամկետ՝ 5 /հինգ օրացուցային օր/, համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի:

8.2 հաստատել 1,2,3,4 չափաբաժիններով ընթացակարգը չկայացած հայտարարելու որոշման տեքստը:

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ | _______________ | Մ. Բաղդասարյան |
| Հանձնաժողովի անդամներ | _______________ | Մ. Խաչատրյան |
| | _______________ | Ա. Նալբանդյան |
| Հանձնաժողովի քարտուղար | _______________ | Ա. Ավետիսյան |